



«Հաստատված է»
ՖՖՖ գործադիր տնօրեն
Ա. Մինասյան
12 հունիսի 2009թ.

ԵՐԵՎԱՆԻ ՖՈՒՏՉԱԼԻ 2009թ.

Գավաթի խաղարկության

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՖՈՒՏԶԱԼԻ 2009թ. ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ

Հոդված 1. Կանոնակարգի նպատակը

Սահմանել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» (այսուհետ՝ ՀՖՖ) հովանու ներքո անցկացվող ֆուտզալի Երևանի Գավաթի խաղարկության կազմակերպման և անցկացման սկզբունքները, իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆուտբոլային սուբյեկտներ) իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավահարաբերությունները:

Հոդված 2. Կարգավորման շրջանակները

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են.

- մրցաշարի կազմակերպման և անցկացման գործընթացը,

- ֆուտբոլիստի՝ մրցաշարին մասնակցելու պայմանները,

- ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պատասխանատվությունն ու իրավահարաբերությունները:

2. Կանոնակարգի նպատակն է նպաստել ֆուտզալի հետագա զարգացմանը և պրոպագանդմանը:

3. Մրցումների նպատակն է ի հայտ բերել մրցանակակիրներին և լավագույն խաղացողներին:

Հոդված 3. Գավաթի խաղարկության մասնակիցները, խաղերի կազմակերպումը և անցկացման կարգը

1. Գավաթի խաղարկությանը կարող են մասնակցել կազմակերպություններ, ակումբներ, մարզադպրոցներ, համայնքներ և այլ կառույցներ (այսուհետ ակումբներ):

2. Մրցումն անցկացվում է համաձայն «Ֆուտզալ խաղի կանոնների»:

3. Գավաթի խաղարկության մասնակցության մուտքավճարն է 50.000 դրամ:

4. Մրցաշարի մասնակիցները պարտավոր են առաջնորդվել սույն կանոնակարգով, ցուցաբերել կարգապահություն, կազմակերպվածություն, հարգանք մրցակցի և ֆուտբոլասերների հանդեպ:

5. Ակումբները հաստատում են իրենց թիմի մասնակցությունը՝ ներկայացնելով մասնակցության համար սահմանված ձևի հավաստագիրը (կազմակերպության կնիքով) մինչև ս/թ հունիսի 26-ը:

6. Մինչև ութ թիմերի մասնակցության դեպքում մրցաշարն անցկացվում է շրջանաձև կարգով, 2 շրջանով: Թիմերը հանդիպում են միմյանց երկուական անգամ՝ սեփական և մրցակցի մարզադահլիճներում: Ութ և ավելի թիմերի դեպքում մրցաշարն անցկացվում է երկու ենթախմբով: Ենթախմբերում առաջին և երկրորդ տեղ գրաված թիմերը կիսաեզրափակիչում մրցում են մյուս ենթախմբի համապատասխանաբար երկրորդ և առաջին տեղ գրաված թիմի հետ: Հաղթող թիմերը եզրափակիչում հանդիպում են միմյանց հետ՝ Գավաթակրին որոշելու համար: Այդ խաղերում ոչ-ոքի արդյունքի դեպքում, հաղթողին որոշելու համար, նշանակվում է լրացուցիչ 10 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակեսով (2x5 րոպե առանց ընդմիջման): Լրացուցիչ ժամանակում, հավասար արդյունքի դեպքում, նշանակվում է 6 մետրանոց հարվածաշար՝ ըստ «Ֆուտզալ խաղի կանոնների»:

7.Մրցումների անցկացման ժամկետներն են.

առաջին շրջան 2009թ հուլիս - օգոստոս
երկրորդ շրջան 2009թ օգոստոս - սեպտեմբեր

8.Խաղերին մասնակցելու համար թույլատրվում է հայտավորել մինչև 5 ղեկավար և մինչև 20 ֆուտբոլիստ:

9.Խաղերին մասնակցելու իրավունք ունեն միայն հայտավորված անձինք.

-հայտավորվող ֆուտբոլիստների համար տարիքային սահմանափակում չի նախատեսվում` բացառությամբ 15 տարին չլրացած պատանիների:

10. Մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է մրցումներից 20 օր և ավարտվում 5 օր առաջ:

11.Ակումբը ներկայացնում է սահմանված ձևի հայտավորման թերթիկը (լրացված)` կազմակերպության կնիքով հաստատված, մեկ լուսանկար և անձնագրի պատճեն` յուրաքանչյուր հայտավորվողի համար:

12.Թիմերում համալրումներ կատարվում են վերահայտավորման միջոցով:

13.Վերահայտավորման ժամկետ է սահմանվում առաջին և երկրորդ շրջանների միջև ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում վերահայտավորումն անվճար է: Սահմանված ժամկետներից առաջ վերահայտավորում թույլատրվում է յուրաքանչյուր վերահայտավորվող ֆուտբոլիստի համար մուծելով 5000 դրամ, իսկ ժամկետի ավարտից հետո ֆուտբոլիստների վերահայտավորում չի թույլատրվում:

14.Յուրաքանչյուր 21-րդ և ավելի ֆուտբոլիստների հայտավորումը/վերահայտավորումը կատարվում է 5000 դրամ մուծելով:

15. Ակումբների (թիմերի) ղեկավար և վարչական կազմերը վերահայտավորվում են առանց ժամկետային սահմանափակումների:

16. Մասնակցի անձնական քարտերը թիմերը ստանում են մրցաշարը սկսելուց ոչ ուշ, քան երկու օր առաջ:

17. Յուրաքանչյուր խաղից 1 ժամ առաջ հանդիպման տեսուչի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն:

18.Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ, քան 35 րոպե առաջ լրացնել խաղի արձանագրությունը և այն, ստորագրված թիմերի մարզիչների ու ավագների կողմից, հանձնել մասնակիցների քարտերի հետ ժամանակաչափորդին (քարտերը խաղից հետո վերադարձվում են):

19.Խաղի արձանագրությունում լրացվում է ոչ ավել, քան 12 ֆուտբոլիստի և 3 ղեկավարի անուն-ազգանունները: Խաղի ժամանակ փոխարինման գոտում (պահեստային նստարանին) գտնվելու իրավունք ունեն միայն արձանագրությունում նշված անձինք, որոնցից առնվազն մեկը պետք է լինի մարզիչ:

20.Ակումբի ղեկավարները պատասխանատու են իրենց ֆուտբոլիստների, ֆուտբոլասերների վարքի համար և իրավունք չունեն միջամտել մրցավարների գործողություններին:

21.Հյուրընկալող ակումբը (թիմը) պարտավոր է մարզադահլիճում ապահովել`

-խորհրդակցության սենյակ (նախախաղային խորհրդակցության համար),

-խրոնոմետր,

-ցուցատախտակ` տուգանային խախտումների միավորները ցուցադրելու համար,

-ոստիկանի մասնակցությունը նախախաղային խորհրդակցությանը,

-հյուր թիմի և սպասարկող խմբի համար թեյ, հանքային ջուր (միայն պլաստիկտարաներով),

-հանդիպումն անցկացնելու համար 2 գնդակ,

-խաղի ընթացքում բժիշկ և ոստիկանության վերակարգ:

Բժշկի և ոստիկանության վերակարգի, ինչպես նաև խրոնոմետրի բացակայության դեպքում հանդիպումը չի անցկացվում:

22.Թիմերը աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների՝ հաղթանակի համար՝ 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1, պարտության դեպքում՝ 0 միավոր:

23.Երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում Առաջնության հաղթողը որոշվում է լրացուցիչ խաղով (խաղերով), մնացած դեպքերում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը.

-հավակնորդ թիմերի հետ հանդիպումներում վաստակել է ավելի շատ միավոր,

-հավակնորդ թիմերի հետ հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

-վիճակահանությամբ:

24.Երևան քաղաքի գավաթակիր թիմն իրավունք է ստանում առանց մուտքավճարի հանդես գալ ԶՅ ֆուտզալի 2009-2010թթ առաջնությունում:

25.Գավաթի խաղարկությունից հանված կան մասնակցությունից հրաժարված թիմի (թիմերի) մուտքավճարը չի վերադարձվում:

Հոդված 4. Սպասարկման իրականացումը

1. Խաղերի անցկացման համար ՀՖՖ-ի համապատասխան բաժինը նշանակում է սպասարկող խումբ՝ մրցավար, 2-րդ մրցավար, ժամանակաչափորդ և տեսուչ:

2. Մրցավարը և/ կամ 2-րդ մրցավարը պատասխանատու են արձանագրություններում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության քարտերի իսկության ստուգման համար:

3. Մինչխաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը և տեսուչը պարտավոր են ստուգել խաղահրապարակի որակը, որի հետ կապված՝ խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:

4. Խաղի տեսուչի բացակայության դեպքում մրցավարը պարտավոր է կատարել խաղի կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր գործառույթները:

5. Խաղից հետո մրցավարը պարտավոր է արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00:

6. Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը, խաղից հետո տեղի ունեցած արտակարգ դեպքերի մասին մրցավարական խմբի անդամները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել զեկուցագրեր ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

7. Խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն տեսուչն է:

8. Որևէ թիմի՝ խաղից ուշանալու դեպքում խաղասկզբի և խաղի անցկացման վերաբերյալ որոշումը կայացնում է տեսուչը:

9. Խաղի վերաբերյալ բողոքարկման պաշտոնական հայտարարության դեպքում տեսուչը պարտավոր է խաղից անմիջապես հետո տեղեկացնել մրցակից թիմին և ՀՖՖ-ին:

Հոդված 5. Բողոքարկումներն ու բողոքները

1. Խաղերի բողոքարկումը նպատակ է հետապնդում խաղի արդյունքը չեղյալ համարել և այն վերախաղարկել: Ի տարբերություն բողոքարկմանը, բողոքը խաղը վերախաղարկելու նպատակ չի հետապնդում և ուղղված է խաղին խոչնդոտող հանգամանքները վերացնելուն, մեղավոր անձանց պատժելուն և հետագայում նման խախտումներ չթույլատրելու:

2. Խաղը բողոքարկելու դեպքում ակումբի պաշտոնյա անձը պաշտոնապես դիմում է խաղի մրցավարին, նշում է կատարում խաղի արձանագրության համապատասխան բաժնում:

3. Բողոքարկող ակունքը խաղի ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում պետք է հիմնավորված բողոքարկը ներկայացնի ՀՖՖ: Չներկայացնելու դեպքում ակունքը տուգանվում է: Ուշ ներկայացված բողոքարկը չի ընդունվում:
4. Քննարկման չեն ենթարկվում ոչ սահմանված կարգով տրված, ինչպես նաև մրցավարի կայացրած փաստացի որոշումները:
5. Բողոքները ներկայացվում են ՀՖՖ մինչև հաջորդ աշխատանքային օրվա վերջը: Բողոքները, կապված դահլիճի գծումների կամ դարպասների չափսերի հետ, ներկայացվում են միայն խաղի մրցավարին մինչև խաղասկիզբը:

Հոդված 6. Պարզևատրում

1. Առաջին տեղ գրաված թիմին շնորհվում է 2009թ. «Ֆուտզալի Երևան Քաղաքի Գավաթակիր» կոչումը, թիմը պարզևատրվում է փոխանցիկ գավաթով, հուշադիպլոմով: Թիմի ֆուտբոլիստները, հայտավորված ղեկավար կազմը պարզևատրվում են հուշադիպլոմներով:
2. Երկրորդ և երրորդ տեղերը գրաված թիմերը պարզևատրվում են համապատասխան հուշադիպլոմներով:
3. Լավագույն ֆուտբոլիստը, ռմբարկուն պարզևատրվում են հուշանվերներով:
4. Լավագույն ֆուտբոլիստը որոշվում է ՀՖՖ քարտուղարության հարցմամբ:
4. Հնարավոր են նաև տարբեր պարզևատրություններ հովանավորների կողմից:

Հոդված 7. Այլ դրույթներ

1. Դարպասապահի վերնաշապիկի գույնը պետք է տարբերվի մրցավարների վերնաշապիկի գույնից: Սարգական վերնաշապիկի վրա թույլատրվում է տեղադրել հովանավորի գովազդը:
2. Թիմը ներկայացնող ակունքը պատասխանատվություն է կրում ֆուտբոլիստների առողջական վիճակի համար:
3. Կարգապահական խախտումները և պատժամիջոցները կարգավորվում են գործող ՀՖՖ Կարգապահական Կանոնակարգով:

ՄԿԱ բաժնի ֆուտզալի և կանանց ֆուտբոլի բաժանմունք